Երիտասարդական ծրագրեր

Երիտասարդների շրջանում գիտության հանրայնացման նպատակով փետրվարին ՀՀ ԳԱԱ-ում մեկնարկեց «Գիտությունն այսօր» նախագիծը, որի շրջանակներում ԳԱԱ գիտնականները ներկայացրեցին գիտահանրամատչելի սեմինարներ արդիական թեմաներով. գենետիկա, սննդակարգ և առողջություն, թմրամիջոցների բացասական ազդեցությունն օրգանիզմի վրա և այլն: ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ու Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի աջակցությամբ սեմինարներին մասնակցեց մոտ 1000 ուսանող և ավագ դպրոցի աշակերտ ՀՀ տարբեր մարզերից:

ՀՀ ԳԱԱ 80-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումների և տարեկան ժողովի շրջանակներում ապրիլին տեղի ունեցավ «Գիտություն» բացօթյա ցուցահանդեսը, որը մեկ հարթակում միավորեց ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպությունները, ՀՀ խոշորագույն բուհերը, ՀՀ ԿԳՄՍՆ և ՀՀ ԳԱԱ գործընկերներին: Ցուցահանդեսին մասնակցած կազմակերպությունների արդյունքներին, գիտական փորձերին և ցուցանմուշներին ծանոթացավ 900-ից ավել աշակերտ և ուսանող ՀՀ տարբեր մարզերից: Ցուցահանդեսի բացումը մեկնարկեցին ՀՀ ԳԱԱ նախագահ Ա. Սաղյանը, ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժ. Անդրեասյանը: Պատվավոր հյուրերն էին ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը, ՀՀ-ում արտակարգ և լիազոր դեսպաններ, բուհերի ռեկտորներ և այլք:

Հուլիսին մեկնարկեց ՀՀ ԳԱԱ ամառային գիտական դպրոցը, որի շրջանակներում ավագ դպրոցի աշակերտները մասնակցեցին պեղումների, լսեցին դասախոսություններ, այցելեցին Երևանի բուսաբանական այգի, Վ. Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարան, Երկրաբանական գիտությունների ինստիտուտի երկրաբանության թանգարան:

Հոկտեմբերի 1-6-ը Հայաստանում առաջին անգամ տեղի ունեցավ Համազգային գիտության շաբաթը, որի համակազմակերպիչն էր ՀՀ ԳԱԱ-ն՝ «Գիտուժ» նախաձեռնության հետ համատեղ ու ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ:

Նոյեմբերի 11-ին ՀՀ ԳԱԱ-ում տեղի ունեցավ Գիտության համաշխարհային օրվան նվիրված միջոցառումը, որին մասնակցեց 700-ից ավել ավագ դպրոցի աշակերտ և ուսանող: Միջոցառման ընթացքում լսվեցին հանրամատչելի դասախոսություններ և ցուցադրվեցին գիտական փորձեր:

«Էրազմուս օրեր 2024»-ի շրջանակում անցկացվեց հանդիպում՝ նվիրված «Էրազմուս+»-ին մասնակցած գիտաշխատողների հաջողության պատմություններին:

ՀՀ ԳԱԱ-ում մեկնարկեց «SciTalk» գիտական հանդիպումների շարքը, որը հարթակ է գիտնականների և բժիշկ-ուսանողների միջև առողջապահական խնդիրների քննարկման համար:

ԳԱԱ կազմակերպություններում անցկացվել է 54 երիտասարդական միջոցառում: